

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՂԱԼԱԶՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՈԼՈՂՅԱՅԻ

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՈՒՂԻՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր Ս. Ս. Սողոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր Ա. Վ. Աբրահամյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու Լ. Պ. Հարոյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012թ. հոկտեմբերի 19-ին ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի նիստում:


Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. սեպտեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ԱՅԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման հարաճուն տեմպերը, սոցիալ-քաղաքական և ժողովրդագրական տեղաշարժերը, նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացները կրճատում են աշխատաշուկային ներկայացվող պահանջների վերանայման ավանդական ժամկետները: Ձարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ աշխատաշուկայի աճող և փոփոխվող պահանջների բավարարման, գործազրկության ծավալների կրճատման գործուն մեխանիզմներից մեկն ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման համակարգի ձևավորումն է:

Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած երկրների բարձրագույն կրթության նախարարների՝ 2001 թվականին Պրահայում կայացած համաժողովի արդյունքում Բոլոնիայի գործընթացի վեց հիմնական սկզբունքներին ավելացան ևս երեքը, այդ թվում՝ ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման գաղափարը (Lifelong Learning):

Աներկբա է, որ յուրաքանչյուր հասարակության զարգացման երաշխիքը նրա կրթական համակարգն է. կրթությունը ոչ միայն որոշակի գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումն է, այլև անձի մտավոր, հոգևոր, բարոյական սկզբունքների, մշակութային հիմքերի զարգացումը, որը հասարակության բարգավաճման և զարգացման նախապայման է:

Այնուհանդերձ մասնագիտական վերապատրաստման տեսության և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ շարունակական կրթության համակարգում մասնագիտական վերապատրաստման ծրագրի իրականացման մանկավարժահոգեբանական պայմանները բավականաչափ խորությամբ հետազոտված չեն: Մանկավարժական գրականության մեջ հիմնականում դիտարկվում են մասնագիտական վերապատրաստման իրականացման առանձին տեսանկյուններ: Շարունակական կրթության գաղափարը հստակ և նորովի դիտարկված չէ նաև ՀՀ մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող իրավական կարևոր փաստաթղթերում՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում. այդ գաղափարը մասամբ արտացոլված է «Լրացուցիչ կրթության» ձևակերպման մեջ, որը չի արտահայտում ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման գաղափարի ամբողջ բովանդակությունը, նպատակները, խնդիրները, այդ քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները:

Մեր հետազոտության շրջանակներում, որն իրականացվել է Շիրակի մարզում, բացահայտվել է, որ մանկավարժների մասնագիտական վերապատրաստումն իրականանում է ուսուցման այնպիսի ձևերի ու մեթոդների, կիրառմամբ, որոնք բնորոշ են բուհում սովորողների ուսուցման ավանդական կազմակերպմանը:

Երկրորդ է, այսօր ուսուցչին մատչելի են ուսուցման նորագույն տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներ, սակայն տեղեկատվության բազմազանությունն ու առատությունն իր հերթին հանգեցնում է այլ բարդությունների, դժվարացնում մասնագիտական գործունեության մեջ առաջնային ուղղությունների ընտրությունը, այս կամ այն տեսության, կրթական նոր հարացույցի արդյունավետության օբյեկտիվ գնահատումը և ուսուցման գործընթացում կիրառումը: Այս տեսանկյունից ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման հարցերը, հաշվի առնելով մարզային առանձնահատկությունները, պահանջում են գիտատեսական և մեթոդական նորովի իմաստավորում:

Դիտարկվող հիմնախնդրի վերլուծությունը և մանկավարժական փորձի ուսումնասիրությունը թույլ տվեցին բացահայտելու մասնագիտական վերապատրաստման ոլորտում առկա հետևյալ հակասությունները՝

1. արդի հասարակության՝ բարձրորակ և մրցունակ մասնագետներ

ունենալու, այդ ուղղությամբ մասնագիտական վերապատրաստման գործընթացն արդյունավետ ու նպատակային կազմակերպելու և այդ գործընթացի ոչ բավականաչափ համակարգված կազմակերպման, ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման քաղաքականության նպատակների ու բովանդակության, իրականացման հստակ մեխանիզմների բացակայության միջև,

2. ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման իրականացման նկատմամբ գիտական մոտեցումների հիմնավորման անհրաժեշտության և այդ գործընթացի իրականացման գիտամեթոդական մշակվածության իրական մակարդակի միջև:

Ելնելով առկա հակասություններից, հաշվի առնելով շարունակական կրթության և այդ համակարգում մասնագիտական վերապատրաստման ժամանակակից միտումներն ու գերակայությունները, ինչպես նաև ուսուցիչների՝ աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին, դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու, անընդհատ կատարելագործվելու պահանջումները՝ կարելի է հստակ սահմանել **հետազոտության հիմնախնդիրը**՝ ժամանակակից պայմաններում ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման արդյունավետ իրականացումը՝ հաշվի առնելով նաև Շիրակի մարզի առանձնահատկությունները և անդրոգոգիկ գրագիտությունը:

Հետազոտության նպատակն է մշակել և տեսականորեն հիմնավորել ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելը, բացահայտել մոդելի իրականացման կազմակերպական-մանկավարժական պայմանները:

Հետազոտության օբյեկտը ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումն է շարունակական կրթության համակարգում:

Հետազոտության առարկան մասնագիտական վերապատրաստման գործընթացի կազմակերպման նոր մոտեցումներն են արդի պայմաններում:

Ելնելով հետազոտության նպատակից, հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունից, ամփոփելով մասնագիտական վերապատրաստման ոլորտում առկա փորձը՝ մենք առաջադրել ենք **հետազոտության վարկածը**. ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումն շարունակական կրթության համատեքստում առավել արդյունավետ կիրականանա, եթե՝

1. մասնագիտական վերապատրաստման գործընթացն անցկացվի հատուկ այդ նպատակով ձևավորված կրթական զարգացնող նոր միջավայրում, և այդ գործընթացն ապահովվի մասնագիտական վերապատրաստման նորագույն ծրագրերով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով,

2. մշակվի և վերապատրաստման գործընթացում ներդրվի մասնագիտական վերապատրաստման նոր մոդել, բացահայտվեն այդ մոդելի արդյունավետ իրականացման մանկավարժական-կազմակերպական պայմանները՝ դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացումը, վերապատրաստող կազմակերպության փոխգործունեությունը կրթության կառավարման մարմինների, տարածաշրջանային աշխատաշուկայի պահանջարկն ուսումնասիրող փորձագետների հետ, իրականավցի մասնագիտական վերապատրաստման կազմակերպման մոնիթորինգ:

Հետազոտության խնդիրներն են.

1. Որոշել մասնագիտական վերապատրաստման հիմնախնդրի մշակվածության աստիճանը շարունակական կրթության համակարգում՝ ուսուցման տեսության մեջ և պրակտիկայում:

2. Մշակել, տեսականորեն և փորձաքննությամբ հիմնավորել մասնագիտական վերապատրաստման նոր մոդել, որը կնպաստի այդ գործընթացի արդյունավետ իրականացմանը:

3. Բացահայտել, մշտադիտարկման (մոնիթորինգ) ընթացքում ստուգել և հիմնավորել կազմակերպական-մանկավարժական այն պայմանները, որոնք ապահովում են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման այդ նոր մոդելի իրականացումը:

4. Հիմնավորել ամբողջ կյանքի ընթացքում կրթության օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Հետազոտության **մեթոդաբանական հիմք** են հանդիսացել՝

- շարունակական կրթության և մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ աշխատությունները (Ա.Ա. Աստվածատրյան, Ռ. Առնաուտյան, Ս.Գ. Վերշլովսկի, Յու.Ն. Կուլյուտկին, Վ.Ա. Սլաստյոնին, Վ.Վ. Մեդնիկով, Ռ.Խ. Գիլմենա, Գարին Ֆ. Վուդելլա):

- մեծահասակների կրթությանը նվիրված մանկավարժահոգեբանական հայեցակարգերը (Բ.Գ. Անան, Ա.Ա. Ռեան, Կ. Քրոս),

- անձնակողմնորոշիչ մոտեցման դրույթները մասնագիտական կրթության համակարգում (Է.Ֆ. Ջեյեր, Վ.Վ. Սերիկով, Վ.Ա. Սլաստյոնին, Ս.Դ. Սմիրնով),

- անդրոգոգիկ ուսուցման առանձնահատկությունները բացահայտող մոտեցումները (Ս.Գե. Վերշլովսկի, Մ.Տ. Գրոմկովա, Փ. Ջարվիս, Մ.Շ. Նոուլտ),

- ուսումնական գործունեությանը նվիրված հոգեբանամանկավարժական տեսությունները (Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն),

- ուսուցման գործընթացում համակարգային մոտեցման դրույթները (Ա.Ն. Ավերյանով, Վ.Գ. Աֆանասև, Ի.Վ. Բլաուբերգ, Է.Գ. Յուդին և այլք):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, իրավական-նորմատիվային փաստաթղթերի, տեսական հայեցակարգերի ուսումնասիրում, մասնագիտական վերապատրաստման հայրենական և արտասահմանյան փորձի վերլուծություն, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, դիտում, զրույց, հարցազրույց, թեստավորում, ինքնազնահատում, արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացների մասնակիցները, որոնց շրջանում անցկացվել է մշտադիտարկում (մոնիթորինգ): Դասընթացները երեք փուլով կազմակերպվել են Երևանում՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում: Մոնիթորինգին մասնակցել են ընդհանուր առմամբ 400 վերապատրաստվողներ, փորձագետներ, մեթոդիստներ, վերապատրաստողներ:

Հետազոտությունն անցկացվել է 3 փուլով:

Առաջին փուլում (2008-2009) ուսումնասիրվել են հետազոտվող հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիոլոգիական, մեթոդական գրականության, իրավական-նորմատիվային փաստաթղթերը, մասնագիտական վերապատրաստման նախկին արդի հայրենական ու արտասահմանյան փորձը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, վարկածը, մշակվել է մոնիթորինգի անցկացման մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2009-2010) ստուգվել է հետազոտության վարկածը, մշակվել է մասնագիտական վերապատրաստման մոդելը, բացահայտվել և հիմնավորվել են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման կազմակերպական-մանկավարժական պայմանները:

Երրորդ փուլում (2010-2011) վերլուծվել, ընդհանրացվել, իմաստավորվել են հետազոտության արդյունքները, իրականացվել է մոնիթորինգը, վերլուծվել և

ամփոփվել են մոնիթորինգի ընթացքում ստացված տվյալները, ձևակերպվել են եզրակացությունները, շարադրվել է ատենախոսությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Մշակվել է մասնագիտական վերապատրաստման նոր մոդել, որը ներառում է նախագծման, նպատակային, բովանդակային, գնահատողական, արդյունավետության բաղադրատարրերը՝ Շիրակի մարզի օրինակով:

2. Բացահայտվել և հիմնավորվել են մասնագիտական վերապատրաստման այդ նոր մոդելի արդյունավետ իրականացումն ապահովող կազմակերպական-մանկավարժական պայմանները՝ դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացում, վերապատրաստող կազմակերպության փոխգործունեությունն ու համագործակցությունը կրթության կառավարման մարմինների, տարածաշրջանի աշխատաշուկայում մանկավարժական կադրերի պահանջարկն ուսումնասիրող փորձագետների հետ, մասնագիտական վերապատրաստման կազմակերպման մոնիթորինգը:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Ընդլայնվել և նորովի են դիտարկվել շարունակական կամ ամբողջ կյանքի ընթացքում կրթության, մեծահասակների կրթության և ինքնակրթության, մասնագիտական վերապատրաստման գործընթացի բովանդակության և կազմակերպման վերաբերյալ գիտական մոտեցումները:

2. Սահմանվել են մասնագիտական վերապատրաստման գերակայություններն ու զարգացման նախադրյալները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

1. Մշակվել է «Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստում» դասընթացի նոր ծրագիրը՝ նախատեսված մասնագիտական վերապատրաստման գործընթացի կազմակերպիչների, մեթոդիստների, վերապատրաստողների համար:

2. Մշակվել են մասնագիտական վերապատրաստման կազմակերպման, մեթոդական ապահովման վերաբերյալ գիտամեթոդական նոր հանձնարարականներ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումը դիտարկվում է շարունակական կամ ամբողջ կյանքի ընթացքում կրթության համակարգում և ուղղված է մասնագիտական լրացուցիչ կրթության ծրագրերով նախատեսված գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը, մասնագիտական ինքնորոշմանը, մասնագիտական որակների կատարելագործմանը, մասնագիտական որակավորումն անընդհատ կատարելագործող կրթությանը:

2. Շարունակական կրթության հայեցակարգը և ռազմավարությունը համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումն է՝ մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման համապատասխան ծրագրերի մշակում, մասնագիտական վերապատրաստման գործընթացի վերահսկողություն իրականացնող կառույցների ձևավորում, տեղեկատվական ծառայությունների մատուցում, աշխատաշուկայում մանկավարժական կադրերի պահանջարկը ուսումնասիրող կառույցների ստեղծում:

3. Մասնագիտական վերապատրաստման նոր մոդելը ներառում է նախագծման, նպատակային, բովանդակային, գործունային, գնահատողական, արդյունավետության բաղադրատարրերը. մոդելի՝ գործնականում ներդրումը նպաստում է մասնագիտական վերապատրաստման արդյունավետ իրականացմանը:

4. Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելի արդյունավետ իրականացումն ապահովող կազմակերպական-մանկավարժական պայմաններն են՝ վերապատրաստման դասընթացներում դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացում, վերապատրաստում իրականացնող

կազմակերպության համագործակցությունը կրթության կառավարման մարմինների, տարածաշրջանային աշխատաշուկայում մանկավարժական կադրերի պահանջարկն ուսումնասիրող կառույցների, գործատուների, շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ, մասնագիտական վերապատրաստման կազմակերպման մոնիթորինգ:

Հետազոտության արդյունքների **հավաստիությունն ու հիմնավորվածությունը** երաշխավորվում են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, մասնագիտական փորձի համակողմանի ուսումնասիրությամբ և արված ընդհանրացումներով, հետազոտության տեսական-մեթոդաբանական ելակետային հիմունքների հիմնավորված բնույթով, հետազոտության հիմնախնդրին, նպատակին ու խնդիրներին համարժեք տեսական և էմպիրիկ մեթոդների համալիր կիրառմամբ, իրականացված մոնիթորինգի ընթացքում ստացված տվյալների նպատակաուղղված վերլուծությամբ, ընդհանրացմամբ, հետազոտության հիմնական արդյունքների փորձաքննությամբ, եզրակացությունների, մեթոդական հանձնարարականների հիմնավորմամբ, տվյալների մշակման ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության փորձաքննությունը իրականացվել է Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի նիստերում, հրատարակված գիտական հոդվածներում, հետազոտության բազա հանդիսացած համապատասխան հաստատություններում, մասնագիտական վերապատրաստման գործընթացի շրջանակներում կազմակերպված դասախոսություններում, զեկուցումներում, բանավեճերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 143 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի հրատապությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, որոշվել են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, մեթոդիկան, մոդուլը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Շարունակական կրթության հիմնախնդիրները ուսուցման տեսության մեջ և պրակտիկայում» խորագրով գլուխը բաղկացած է երեք փոխկապակցված ենթագլուխներից, որոնցում հանգամանորեն ներկայացված են մասնագիտական վերապատրաստման (հայրենական և արտասահմանյան) փորձի վերլուծությունը, տեսական և մեթոդաբանական հիմնավորումը, կրթության բովանդակությունն ու կազմակերպման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները շարունակական կրթության համատեքստում, մասնագիտական վերապատրաստման կատարելագործման հիմնական ուղղությունները:

Դիտակված է, որ մասնագիտական լրացուցիչ կրթությունը, ի տարբերություն մասնագիտական բազային կրթության, իրականացնում է ոչ այնքան սոցիալական,

որքան «անձնային» պատվեր, այսինքն՝ մարդուն առաջարկում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց պահանջը նա զգում է մասնագիտական զարգացման որոշակի փուլում:

Հիմնավորված է, որ մասնագիտական լրացուցիչ կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում ուսուցչի վերապատրաստման, նրա մասնագիտական վարպետության բարձրացման, անձնային որակների և ընդունակությունների զարգացման եղանակների, միջոցների, փուլերի, ձևերի փոխկապակցված սոցիալ-մանկավարժական համակարգ է, որը յուրաքանչյուրին իրավունք և հնարավորություն է ընձեռում ամբողջ կյանքի ընթացքում իրականացնել սեփական ծրագրերը, լրացնել և ամբողջացնել մասնագիտական կրթությունը՝ արդյունքում ձևավորելով որակյալ և մրցունակ մասնագետ:

Մասնագիտական լրացուցիչ կամ շարունակական կրթության ձևերից է մասնագիտական վերապատրաստումը:

Երկրորդ՝ «Մասնագիտական լրացուցիչ կրթության բովանդակությունն ու կազմակերպման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները շարունակական կրթության համատեքստում» ենթագլխում ներկայացված են լրացուցիչ մասնագիտական կրթական համակարգի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները՝ շարունակական կրթահամակարգում:

Հիմնավորված է, որ մասնագիտական լրացուցիչ կրթությունը ենթադրում է անձի մասնագիտական որակների անընդհատ զարգացում և կատարելագործում, որը պայմաններ է ապահովում հասարակական կյանքում և մասնագիտական գործունեության ոլորտում արդյունավետ ինքնիրացման համար:

Մասնագիտական լրացուցիչ կրթության՝ ավելի խոշոր համակարգերի հետ կապերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն մասնագիտական վերապատրաստության, շարունակական կրթության և մեծահասակների կրթության համակարգի բաղադրատարրն է, որի տեսական և գիտամեթոդական բազան կազմում են անդրոգոգիկ կրթության փիլիսոփայությունը, կրթության կառավարումը, մասնագիտական կրթության մանկավարժությունը:

Ապացուցված է, որ մասնագիտական լրացուցիչ կրթությունը նպատակառուղիված է մասնագիտական կրթություն ունեցող անձանց որակավորման շարունակական բարձրացմանն ու մասնագիտական վերապատրաստմանը մասնագիտական լրացուցիչ կրթական ծրարերին, մասնագիտությանը առաջադրվող որակական պահանջներին համապատասխան և նպաստում է անձի գործարար կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, մշակութային մակարդակի բարձրացմանը:

Երրորդ՝ «Մասնագիտական վերապատրաստման կատարելագործման հիմնական ուղղությունները» վերնագրով ենթագլուխը բացահայտում է այն հիմնական ուղիները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական վերապատրաստման համար:

Հիմնվելով մասնագիտական վերապատրաստման ոլորտում առկա փորձի վրա՝ մեր կողմից բացահայտվել է, որ մասնագետների վերապատրաստման ծրագրերի իրականացումն անհրաժեշտ է՝

- հասարակությանն ու պետությանը, քանի որ թույլ է տալիս մասնագետների որակավորումը բարձրացնել սեղմ ժամկետներում, ապահովել մասնագետների մասնագիտական գիտելիքների ու գործարար հատկանիշների բարձրացումը գիտական բարձր մակարդակով, այն չափանիշների թվում, որոնք հաշվի են առնվում ակադեմիական մակարդակի գնահատման ժամանակ, առաջնային է համարվում ուսուցման շարունակականությունը լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով,

- մասնագետների վերապատրաստման ավանդական ենթակառուցվածք-

ների համար բուհերի՝ մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացման պլանով հնարավորությունների ընդլայնումը նպաստում է մրցունակ և ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական միջավայրի ստեղծմանը և խթանում է առաջարկվող կրթական ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ նրանց գործունեությունը,

- մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացումը ունկնդիրների համար ապահովում է որակյալ կրթական ծառայություններ ստանալու լայն ընտրություն և հնարավորություն,

- լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացումը բուհերին հնարավորություն է ընձեռում ընդլայնելու կրթական ծառայությունների ոլորտը, ապահովում է արտաբյուջետային ֆինանսավորման նոր աղբյուրների կադրային ներուժի զարգացումը, կրթության շարունակականության սկզբունքի իրականացումը:

Շարունակական կրթության գործընթացի պատմական զարգացման և մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացման արդի վիճակի վերլուծությունների հիման վրա հիմնավորված է, որ դիտարկվող գործընթացում առկա դժվարությունների և թերությունների հետ նկատվում են այդ գործընթացի կազմակերպման, բովանդակության, մեթոդական համակարգի կատարելագործման մի շարք ուղղություններ: Ոլորտում առկա գիտական հետազոտությունների և պրակտիկ գործունեության համադրման արդյունքում վերապատրաստող հաստատությունները մշակում են նորարար համալիր կրթական ծրագրեր, կիրառում մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներ: Առկա գործընթացները վկայում են, որ էական ձեռքբերումներ կան սոցիալ-տնտեսական պայմաններին, աշխատաշուկայի պահանջներին հարմարման, սպառողների պահանջների հաշվառման, ռազմավարական նոր ուղղությունների որոնման տեսանկյունից: Շարունակական կրթության իրականացման մեր կողմից ուսումնասիրվող փորձը բացահայտում է մանկավարժների մասնագիտական վերապատրաստման մոդելի մշակման, տեսական ու գործնական հիմնավորման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացման հոգեբանամանկավարժական հիմնավորումը»** խորագրով գլուխը բաղկացած է միմյանց փոխլրացնող երեք ենթագլուխներից, որոնցում դիտարկված են մասնագիտական վերապատրաստման մոդելին առաջադրվող պահանջները, մոդելի բովանդակությունը, բաղադրատարրերը, գործառույթները և իրականացման ուղիները, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացման մանկավարժական պայմանները, մասնագիտական վերապատրաստման մոնիթորինգի արդյունքների վերլուծությունը և գնահատումը:

Չետազոտության երկրորդ գլխի առաջին՝ **«Մասնագիտական վերապատրաստման մոդելին առաջադրվող պահանջները, մոդելի բովանդակությունը, բաղադրատարրերը, գործառույթները և իրականացման ուղիները»** վերնագրով ենթագլխում քննարկված են այն պահանջները, որոնք առաջադրվում են մասնագիտական վերապատրաստման մոդելի բովանդակությանը և գործառույթներին:

Նորովի է դիտարկված «մոդել» հասկացությունը: Հիմնավորված է, որ մոդելը կարելի է դիտարկել որպես ստուգման միջոց, թե իրականում գործում են արդյոք կապերը, հարաբերությունները, կառուցվածքները, որոնք ձևակերպվում են տեսության մեջ և իրականանում մոդելում: Մոդելի գործարկումը տեսության ճշմարտացիության գործնական ապացույցն է:

Մասնագիտական վերապատրաստման մոդելը կառուցելիս, մենք հիմնվել ենք համակարգային մոտեցման վրա:

Ապացուցված է, որ մանկավարժական գործընթացի ուսումնասիրումը

համակարգային մոտեցման տեսանկյունից թույլ է տալիս բացահայտել կառուցվածքի բաղկացուցիչ տարրերի փոխադարձ կապերը, որոշել համակարգի զարգացման մակարդակները, սահմանել համակարգի բաղադրատարրերի ներքին և արտաքին առնչությունները, որոշել այն գործոնները, որոնք ապահովում են համակարգի կայացումը և զարգացումը, որոշել համակարգի զարգացման շարժիչ ուժերը:

Մասնագիտական վերապատրաստման՝ մեր կողմից մշակված մոդելը ներառում է նախագծման-նպատակային, բովանդակային, գնահատողական, արդյունավետության բաղադրատարրերը: Մոդելի իրականացումն ապահովում է մասնագիտական վերապատրաստման համակարգի նպատակաուղղված զարգացումը: Մոդելի նախագծման-նպատակային բաղադրատարրը ներառում է այնպիսի նպատակների, խնդիրների, սկզբունքների սահմանում, որոնց համապատասխան իրականացում է մասնագիտական վերապատրաստման բովանդակությունը, ծրագրային և մեթոդական ապահովումը, որոշվում են գործընթացի իրականացման ձևերն ու միջոցները: Հատկապես կարևորվում է մասնագիտական վերապատրաստման սուբյեկտների գործառնությունների հստակեցումը, փոխազդեցության միջոցների և մեթոդների ընտրությունը:

Հիմնավորված է նաև, որ մանկավարժների մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացումը նպաստում է այդ գործընթացի կազմակերպման ծրագրերի ներդրմանը, մասնագիտական վերապատրաստման սուբյեկտների՝ դասավանդողների, վերապատրաստող կազմակերպությունների, կրթության կառավարման մարմինների ներկայացուցիչների, շուկայագետների, փորձագետների, վերլուծաբանների ջանքերի միավորմանը՝ ապահովելու համապատասխան կառույցների ակտիվ գործունեությունը և կրթական բարեփոխումների արդի ժամանակաշրջանում ձևավորելու շարունակական կրթության ամբողջական, ճկուն համակարգ:

Երկրորդ՝ «Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացման մանկավարժական պայմանները» վերտառությամբ ենթազխում բացահայտված են այն մանկավարժական պայմանները, որոնք անհրաժեշտ են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման համար:

Ելնելով մասնագիտական վերապատրաստման մանկավարժական պայմանների վերաբերյալ տվյալների վերլուծության արդյունքներից և հիմք ընդունելով փորձագիտական գնահատումները՝ որպես առաջնային պայմաններ դիտարկված են մասնագիտական վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների փոխգործունեությունը կրթության կառավարման մարմինների հետ և վերապատրաստողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացումը:

Հիմնավորված է, որ վերապատրաստողների մեծ մասը անդրոգոգիկ իրազեկության ոչ բավարար մակարդակ ունի: Դա պայմանավորված է նրանով, որ վերջիններս հիմնականում ուսանողների հետ աշխատանքի փորձ ունեն և բնականաբար անդրոգոգիկ գիտելիքների ու կարողությունների ոչ բավականաչափ ձևավորվածություն: Մասնագիտական վերապատրաստման գործընթացում հաճախ մեծ տեղ է տրվում գիտական գիտելիքների հաղորդմանը՝ ավելի քիչ կարևորելով ուսուցման մեթոդական կողմը:

Հետազոտության շրջանակներում առանձնացված են մասնագիտական վերապատրաստման սուբյեկտների փոխներգործության տարբեր ուղղություններ, որոնք արտացոլված են թիվ 1 աղյուսակում:

Մասնագիտական վերապատրաստման սուբյեկտների փոխներգործության հիմնական ուղղությունները և մակարդակները

Փոխներգործության ուղղությունները	Փոխներգործության սուբյեկտները	Մակարդակները
Կազմակերպական-կառավարման	Մասնագիտական վերապատրաստում իրականացնող կողմեր և կրթության կառավարման մարմիններ	արտաքին՝ հաստատությունների և կազմակերպությունների միջև
Կազմակերպական-մեթոդական	Կազմակերպական-մեթոդական ծառայություններ, բուհի համապատասխան ֆակուլտետներ	ներքին՝ բուհի ստորաբաժանումների միջև
Անդրագոգիկ	Վերապատրաստողներ և վերապատրաստվողներ	միջանձնային

Մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացման կազմակերպական-մանկավարժական կարևոր պայման է մասնագիտական վերապատրաստման մշտադիտարկումը:

Երկրորդ գլխի վերջին՝ «Մասնագիտական վերապատրաստման մոնիթորինգի արդյունքների վերլուծությունը և գնահատումը» ենթագլխում դիտարկվում են մեր հետազոտության խնդիրներից բխող արդյունքների վերլուծությունները:

Հիմնավորված է, որ մասնագիտական վերապատրաստման մոնիթորինգի հիմնական խնդիրներն են՝

- տեղեկատվություն ստանալ մասնագիտական վերապատրաստման կազմակերպական-մեթոդական կողմի վերաբերյալ և օպերատիվ միջոցներ ձեռնարկել այդ գործընթացում փոփոխություններ ներմուծելու համար,

- վերապատրաստողների մեջ անդրագոգիկ իրազեկության բարձրացման կայուն դրդապատճառներ ձևավորել, նրանց մղել արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ որոնելու,

- կայուն կապեր և փոխհարաբերություններ սահմանել վերապատրաստող կազմակերպության և կրթության կառավարման տեղական ու տարածաշրջանային (նաև միջազգային) կառույցների միջև մասնագիտական վերապատրաստման խնդիրների շուրջ մշտական փոխազդեցություն ձևավորելու համար:

Մեր հետազոտության շրջանակներում մասնագիտական վերապատրաստման մոնիթորինգը հիմնականում անցկացվել է ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների իրականացման ընթացքում: Այդ դասընթացներն անցկացվել են երեք փուլով համաշխարհային բանկի կրթական ծրագրերի շրջանակներում: Դասընթացների առաջին փուլը մեկնարկեց 2008թ. հոկտեմբերին, մասնակցում էին 290 ուսուցիչ: Երկրորդ փուլին, որը մեկնարկեց 2009թ. հունիսի 15-ին, մասնակցում էին 310 ուսուցիչ, ութ մասնագիտությունների գծով: Երրորդ փուլին մասնակցում էին 273 ուսուցիչ:

Վերապատրաստման առաջին փուլը իրականացավ Երևանում և Գյումրիում, երկրորդ փուլը՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում և Գավառում: Դասընթացների ավարտին բոլոր վերապատրաստվողների շրջանում անցկացվել է մոնիթորինգ՝ պարզելու համար վերապատրաստման գործընթացի, կազմակերպման ձևերի ու

մեթոդների արդյունավետությունը, դրական կողմերն ու թերությունները:

Մեր կողմից անցկացվել է հարցում՝ պարզելու համար ունկնդիրների՝ մասնագիտական վերապատրաստման դասընթացներում ներգրավվելու պատճառները: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերապատրաստվողների 20%-ի համար կարևոր են այն պատճառները, որոնք թելադրված են Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական արդի տեղաշարժերով՝ աշխատանքի կորուստ կամ այն կորցնելու մտավախություն, ըստ մասնագիտության աշխատանքի տեղավորվելու անհնարինություն, օպտիմալացման հետևանքով աշխատատեղերի կրճատում և այլն: Հոգեբանամանկավարժական և մասնագիտական նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեռք բերելու և մասնագիտական գործունեության ընթացքում դրանք արդյունավետորեն կիրառելու ձգտում ունեն հարցվածների 59%-ը, հարցվածների 21%-ը վերապատրաստման ծրագրերում ընդգրկվել է ինքնաբերաբար, տվյալ ուսումնական հաստատության նախաձեռնությամբ՝ 12-ամյա կրթական համակարգին անցնելու կապակցությամբ ավագ դպրոցում դասավանդելու համար հավաստագիր ունենալու նպատակով:


Մեր կողմից իրականացվել է հարցում՝ պարզելու համար, թե ունկնդիրները որքանով են գնահատում մասնագիտական վերապատրաստման գործընթացի կատարելագործման անհրաժեշտությունը: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման գործընթացի կատարելագործումը անհրաժեշտ է և անխուսափելի: Ժամանակակից աշխարհում, հատկապես կրթական ոլորտում ընթացող տեղաշարժերը, բարեփոխումները, եվրոպական կրթական տարածքին ինտեգրումը, կրթական կառույցների, աշխատաշուկայի և գործատուների գործընկերության ճկուն մեխանիզմների ստեղծումը հրամայաբար պահանջում են մասնագիտական վերապատրաստման գործընթացի իրականացման նկատմամբ միասնական մոտեցում, պետական հովանավորչություն, մշտապես գործող և գործընթացը կոորդինացնող կայուն կառույցներ: Տարբեր կազմակերպությունների, գերատեսչությունների, հիմնադրամների կողմից հատվածաբար, ոչ համակարգված կազմակերպվող դասընթացները, ճիշտ է, նկատելիորեն բարելավում են իրավիճակը, սակայն դեռևս հնարավոր չէ միանշանակ բավարար գնահատել գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Հարցվածների 41%-ը նշում է, որ անհրաժեշտ է մասնագիտական վերապատրաստման գործընթացի զգալի չափով կատարելագործում, 52%-ը կողմնակից է մասնակի կատարելագործման, 4%-ը կատարելագործման անհրաժեշտությունը որոշակիորեն չի հիմնավորում, 3%-ը դժվարանում է պատասխանել:

Աղյուսակ 2

Մասնագիտական վերապատրաստման կատարելագործման անհրաժեշտության գնահատումը

Մասնագիտական վերապատրաստման կատարելագործման անհրաժեշտության գնահատումը	Քանակ	%
Անհրաժեշտ է մշանակալի չափով կատարելագործում	164	41
Անհրաժեշտ է մասնակի կատարելագործում	208	52
Կատարելագործման անհրաժեշտություն չկա	16	4
Դժվարանում են պատասխանել	12	3




Փճանկար 2. Մասնագիտական վերապատրաստման կատարելագործման անհրաժեշտության գնահատումը

Դասավանդողների շրջանում մեր անկետային հարցումները ցույց են տալիս, որ նրանց կողմից սեփական անդրոգոգիկ իրազեկության մակարդակը ընդհանուր առմամբ գնահատվում է միջին: Հարցմանը մասնակցած վերապատրաստողների 48%-ը նշում է, որ պարբերաբար զբաղվում է ինքնակրթությամբ, անդրոգոգիկ իրազեկության բարձրացմամբ, 52%-ը զբաղվում է երբեմն-երբեմն, անհրաժեշտության դեպքում: Դասավանդողների շրջանում ինքնակրթության և անդրոգոգիկ իրազեկության բարձրացման տարածված ձևը մեծահասակների կրթության տեսության և մեթոդիկայի, մեծահասակների հոգեբանության հիմնախնդիրներին նվիրված գրականության ուսումնասիրումն է (44%), գիտագործնական կոնֆերանսներին, սեմինարներին, մասնագիտական վերապատրաստման հարցերին նվիրված խորհրդատվություններին մասնակցությունը (26%), ինտերնետային կայքերում զետեղված տեղեկատվության յուրացումը (30%):

Աղյուսակ 3

Դասավանդողների ինքնակրթության և անդրոգոգիկ իրազեկության բարձրացման ձևեր

Դասավանդողների ինքնակրթության և անդրոգոգիկ իրազեկության բարձրացման ձևեր	Տոկոս
1. Մեծահասակների կրթության տեսությանը և մեթոդիկային նվիրված գրականության ուսումնասիրում	44
2. Գիտագործնական կոնֆերանսներին, սեմինարներին, խորհրդատվություններին մասնակցություն	26
3. Ինտերնետային կայքերում զետեղված տեղեկատվության յուրացում	30



Գծանկար 3. Դասավանդողների ինքնակրթության և անդրոգոգիկ իրազեկության բարձրացման ձևեր

Հետազոտության ընթացքում մեր կողմից մշակվել է «Մասնագիտական վերապատրաստում» դասընթացի ծրագիր:

Մեր դիտումների և զրույցների ընթացքում հատկապես մեծ ուշադրություն ենք հատկացրել դասավանդողների անձնային որակների ձևավորվածությանը: Նրանցից շատերը նշում են, որ մասնագիտական վերապատրաստման ընթացքում անդրոգոգիկ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելով և դրանք ուսուցման գործընթացում կիրառելով՝ առավել պահանջկոտ են դարձել իրենց գործունեության նկատմամբ, առավել գերակշռում են փոխըմբռնման, հաղորդակցական հարաբերությունները, միմյանց նկատմամբ բարյացակամությունը: Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության մակարդակը ընդհանուր առմամբ բավականաչափ բարձր է, որը կարևոր նշանակություն ունի մասնագիտական վերապատրաստման գործընթացի արդյունավետ իրականացման գործում:

Այսպիսով՝ մոնիթորինգի կազմակերպման մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ամբողջական տեղեկատվություն ունենալ մասնագիտական վերապատրաստման գործընթացի, սոցիալ-մանկավարժական արդի իրավիճակի մասին և ստացված տվյալները օգտագործել վերապատրաստողների մասնագիտական մակարդակի գնահատման ու վերապատրաստվողների՝ որակապես նոր մասնագիտական գործունեության իրականացման համար: Մասնագիտական պատրաստության մակարդակների դիմամիկայի դիտարկումը բացահայտում է վերապատրաստման գործընթացում դրական առաջընթացը ըստ դրդապատճառային-պահանջմունքային, իմացական, գործունային, գնահատողական բաղադրատարրերի: Մոնիթորինգի տվյալների վերլուծությունը ցույց են տալիս, որ մեր կողմից բացահայտված մանկավարժական պայմանների ապահովումը կարևոր է մասնագիտական ոլորտում առկա ժամանակակից տեղաշարժերի, կրթական բարեփոխումների պայմաններում մասնագիտական գործունեության բարձր արդյունավետություն ապահովելու համար:

Հիմնվելով տեսական վերլուծությունների, մասնագիտական վերապատրաստման փորձի, մոնիթորինգի տվյալների, ստացված արդյունքների վրա՝ մեր կողմից ձևակերպվել են հետևյալ հիմնական **եզրակացությունները**.

1. Հետազոտության ընթացքում բացահայտվել է, որ ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումն առավել արդյունավետ է իրականանում մասնագիտական վերապատրաստման նոր մոդելի մշակման և կիրառման դեպքում:

2. Տեսական հետազոտության ընթացքում մշակվել է ուսուցիչների մասնա-

գիտական վերապատրաստման նոր մոդել, որը ներառում է նախագծման, նպատակային, բովանդակային, գնահատողական, արդյունավետության բաղադրատարրերը: Նախագծման-նպատակային բաղադրատարրն ընդգրկում է մասնագիտական վերապատրաստման նպատակը, խնդիրները, սկզբունքները, որոնք ապահովում են մասնագիտական վերապատրաստման բովանդակության ընտրությունը և ծրագրային-մեթոդական կողմը: Մոդելի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է կազմակերպական-մանկավարժական հետևյալ պայմանների իրականացմամբ՝ դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացում, վերապատրաստող կազմակերպության փոխներգործություն և համագործակցություն կրթության կառավարման մարմինների, տարածաշրջանային աշխատաշուկայի՝ մանկավարժական կադրերի պահանջարկն ուսումնասիրող փորձագետների, մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի հետ, մասնագիտական վերապատրաստման գործընթացի մոնիթորինգ:

3. Մոդելի բովանդակային բաղադրատարրը ներառում է մասնագիտական վերապատրաստման կազմակերպման բովանդակության, ձևերի ու մեթոդների փոխադարձ կապը:

4. Գնահատողական-արդյունավետության բաղադրատարրը թույլ է տալիս որոշել մեր կողմից մշակած նոր մոդելի իրականացման արդյունավետության մակարդակը ուսուցիչների որակապես նոր մասնագիտական գործունեության յուրացման պատրաստության հիման վրա: Այդ պատրաստությունը բնութագրվում է որպես ինտեգրատիվ կրթություն, որը ընդգրկում է դրդապատճառային, իմացական, գործունային բաղադրատարրերը:

5. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մասնագիտական վերապատրաստման նոր մոդելն արդյունավետորեն իրականացնում է կազմակերպական-մանկավարժական հետևյալ պայմանների առկայությամբ՝ դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացում, վերապատրաստող կազմակերպության փոխգործունեություն կրթության կառավարման մարմինների հետ, մասնագիտական վերապատրաստման գործընթացի մոնիթորինգի իրականացում: Մշակված մոդելի իրականացման կազմակերպական-մանկավարժական պայմաններն արտացոլում են մոդելի բաղադրատարրերի արդյունավետ գործունեությունը:

6. Դասավանդողների անդրոգոգիկ իրազեկության բարձրացման արդյունքն անդրոգոգիկ գիտելիքների ու կարողությունների տիրապետումն է, մեծահասակների հետ աշխատելու դրդապատճառների ձևավորվածության բարձր մակարդակը, գործնական այնպիսի կարողությունների կատարելագործումը, որոնք կապված են ուսումնական գործընթացի՝ անդրոգոգիկ սկզբունքների հիման վրա կազմակերպման վերապատրաստվող ուսուցիչների հետ անդրոգոգիկ փոխազդեցության իրականացման հետ:

7. Մասնագիտական վերապատրաստման մոդելի իրականացման կազմակերպական-մանկավարժական կարևոր պայմանը վերապատրաստող կազմակերպության փոխգործունեությունն է կրթության կառավարման մարմինների տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկն ուսումնասիրող փորձագետների, գործատուների, մանկավարժական կրթությամբ կադրեր պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Այդ պայմանի իրագործումը թույլ է տալիս համատեղ իրականացնել մասնագիտական վերապատրաստման ոլորտում կրթական հաստատությունների պահանջմունքների ախտորոշումն ու վերլուծությունը, մշակել մասնագիտական վերապատրաստման ծրագրի բովանդակությունը՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:

8. Մասնագիտական վերապատրաստման մոդելի կազմակերպամանկավարժական հաջորդ պայմանն այդ գործընթացի մոնիթորինգն է, որի միջոցով բացահայտվում է դասավանդման, մեթոդական և նյութատեխնիկական ապահովման որակը, փորձաքննության են դրվում և գնահատվում են կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ձևերի ու մեթոդների օգտագործման արդյունավետությունը: Մոնիթորինգի ընթացքում ստացված տվյալների գիտատեսական իմաստավորումը հնարավորություն է տալիս ձեռնարկել միջոցներ, որոնք ուղղված են դասավանդման մակարդակի բարձրացմանը, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի բովանդակության, ձևերի ու մեթոդների կատարելագործմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ս. Վ. Ղալաշյան «Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման մոդելի մշակման և կիրառման արդյունավետ ուղիները», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, ԳՊՄԻ, 13-14 դեկտեմբերի, 2010թ., 2011թ., էջ 278-281:

2. Ս. Վ. Ղալաշյան «Շարունակական կրթության բովանդակությունն ու դրա հոգեբանամանկավարժական հիմնավորումը», «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N1, 2011թ, էջ 12-20:

3. Ս. Վ. Ղալաշյան «Ուսուցիչների վերապատրաստման ուղղությունները», «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական ամսագիր, N1, 2011թ, էջ 43-49:

4. Ս. Վ. Ղալաշյան «Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման տեսական և մեթոդական հիմնավորումը», «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 5, 2011թ., էջ 42-47:

КАЛАЧЯН МЕСРОП ВОЛОДЯЕВИЧ

Эффективные пути профессиональной переподготовки учителей в контексте непрерывного образования

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-«Теория и история педагогики».

Защита состоится 19 октября 2012г. в 14⁰⁰ ч. на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном университете, по адресу: 025, г. Ереван, ул. Х. Абовяна 52^а, ЕГУ, корпус факультета армянкой филологии, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Интенсивные темпы развития мировой экономики, социально-политические, демократические преобразования, внедрение новых технологий сокращают традиционные сроки пересмотра новых требований к рынку труда. Опыт стран, имеющих развитую экономику, показывает, что для

удовлетворения быстро растущих и меняющихся требований к рынку труда, для сокращения уровня безработицы одним из механизмов является формирование системы обучения в течение всей жизни.

К шести основным принципам Болонского процесса в 2011г, в результате подписания Болонского манифеста министрами высшего образования различных государств на международном конгрессе в Праге, присоединились еще три принципа, в том числе - идея об обучении в течение всей жизни.

Цель исследования - разработать и теоретически обосновать модель профессиональной переподготовки учителей, выявить организационно-педагогические условия осуществления этой модели.

Задачи исследования:

1. Выявить степень разработанности проблемы профессиональной переподготовки учителей в системе непрерывного образования: в теории и практике обучения.

2. Разработать, теоретически и экспериментально обосновать новую модель профессиональной переподготовки учителей, которая будет способствовать эффективности данного процесса.

3. Выявить, проверить в процессе мониторинга и обосновать те организационно-педагогические условия, которые обеспечат осуществление новой модели профессиональной переподготовки учителей.

4. Обосновать необходимость принятия принципа образования в течение всей жизни.

Научная новизна исследования.

1. Разработана новая модель профессиональной переподготовки учителей на примере Ширакского марза, которая включает в себя следующие компоненты: проективный, целевой, содержательный, оценочный, а также компонент эффективности.

2. Выявлены и обоснованы организационно-педагогические условия, обеспечивающие эффективное осуществление новой модели профессиональной переподготовки учителей: повышение андрогогической и информированности учителей, сотрудничество и взаимодействие организаций, осуществляющих профессиональную переподготовку учителей, сотрудничество и взаимодействие организаций, осуществляющих профессиональную переподготовку, с органами управления образованием, экспертами, изучающих потребности в

педагогических кадрах на рынке труда данной территории, мониторинг процесса организации профессиональной переподготовки учителей.

Теоретическое значение исследования.

1. Расширены и по-новому рассмотрены содержание и научные подходы к организации непрерывного образования или образования и самообразования взрослых, процесса профессиональной переподготовки учителей.
2. Определены приоритеты и предпосылки развития профессиональной переподготовки учителей.

Практическое значение исследования.

1. Разработана новая программа учебного курса "Профессиональная переподготовка учителей" для организаторов, методистов, специалистов профессиональной переподготовки учителей.
2. Разработаны новые научно-методические рекомендации по методическому обеспечению организации профессиональной переподготовки учителей.

Апробация диссертации: апробация результатов исследования и внедрение их в практику осуществлялась в процессе профессиональной переподготовки учителей в Гюмрийском филиале ЗАО Национального института образования Министерства образования и науки РА.

Основные теоретические положения диссертации в виде докладов нашли отражение в 4 статьях.

Структура работы. Работа состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы, приложения.

GHALACHYAN MESROP VALOD THE EFFECTIVE WAYS OF PROFESSIONAL RETRAINING OF TEACHERS IN THE CONTEXT OF CONTINUOUS EDUCATION

REZUME

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01. - "The theory and history of pedagogy".

The defense of the thesis will be held at 14⁰⁰ on October 19, 2012 at the session of the Special Board 065 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State University, address: 0025, 52^a, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203.

The actuality of the research. The intensive world economic development, socio-political, democratic reforms, introduction of new technology reduces the traditional terms of reviewing the new requirements to labor market. The experience of countries with

developing economies, shows that to meet the rapidly growing and changing needs of the labor market, to reduce unemployment is one of the mechanisms of the formation of teaching throughout life.

Six basic principles of the Bologna process which started in 2011 as a result of signing the manifesto of the Bologna ministers of higher education of different countries at an international congress in Prague, joined three more principles, including - the idea of teaching throughout life.

The aim of the research is to develop and substantiate theoretically the model of retraining teachers, to determine the organizational and pedagogical conditions of realization of this model.

The objectives of research:

- A. To identify the degree of elaboration of the problems of professional training for teachers in continuing education in theory and practice of teaching.
- B. To develop, theoretically and experimentally substantiate a new model of professional training of teachers, which will contribute to the efficiency of the process.
- C. To reveal, test in the monitoring process and determine those organizational and pedagogical conditions that will ensure the implementation of a new model of professional training of teachers.
- D. To substantiate the need for implementing the principle of education throughout life.

Scientific novelty of the research:

- A. It develops a new model of professional training for teachers on the example of Shirak region, which includes the following components: projective, targeted or special-purpose, substantive, evaluative, as well as the component of effectiveness.
- B. It establishes and develops the organizational and pedagogical conditions that ensure the effective implementation of the new model of professional training of teachers: development of teachers' androgogic and informational awareness, cooperation and collaboration of organizations engaged in professional training of teachers, cooperation and collaboration of organizations carrying out vocational training, with education authorities, experts that study the needs of teaching staff in the labor market of the area, the monitoring of the organization of vocational training.

The theoretical significance of the research.

- A. It expands and re-examines the content and scientific approaches to continuing education or adult education and self-education, the process of professional retraining.
- B. It determines the priorities and prerequisites of professional training.

The practical significance of the research.

- A. It develops a new program of training course "Professional training of teachers" for the organizers, supervisors, specialists of professional retraining of teachers.
- B. It develops new scientific and methodological recommendations for ensuring the organization of vocational retraining of teachers.

Exploration of research results.

The main points of the research were discussed at the sitting of the chair of pedagogy of State Pedagogical Institute after M. Nalbandyan.

The exploration of the results of the study was carried out and put into practice in the process of retraining teachers in Gyumri branch of CJSC National Institute of Education, Ministry of Education and Science of RA.

On the topic of the thesis were published four scientific papers.

The structure of the work. The work consists of an introduction, two chapters, conclusion, bibliography, appendices.

A handwritten signature in black ink, appearing to read "A. P. H. Mills". The signature is written in a cursive style with a large, stylized initial "M" at the end.